ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բովանդակություն

2 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակը Հայաստանում և նրանց մարդու իրավունքները

4 Հաշմանդամության սահմանումը

6 Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները

8 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան և Կամընտիր արձանագրությունը

14 «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը

18 Բառեր և եզրույթներ

20 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շարժումը ԱՄՆ–ում և Մեծ Բրիտանիայում

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակը Հայաստանում և նրանց մարդու իրավունքները

Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող ավելի քան 200.000 մարդ: Մինչ օրս Հայաստանում հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության և որոշումներ կայացնողների կողմից դիտարկվում են որպես բուժման, օգնության և խնամքի արժանի մարդիկ, ում մասին պետք է մշտապես հոգ տանել: Նրանց կրթության, զբաղվածության և մյուս կարիքների բավարարումը համարվում է բարեգործություն, ոչ թե մարդու իրավունքի ապահովում:

Միջավայրային արգելքների, ծառայությունների անմատչելիության և տարբեր ոլորտներում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման բացակայության պատճառով նրանք դուրս են մնում կյանքի բոլոր ոլորտներից:

Այդպիսով Հայաստանում սահմանափակված է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը:

Պատճառներից մեկը մնում է նաև օրենսդրական հիմքերի, հաշմանդամության հիմքով խտրականության բացառման մեխանիզմների բացակայությունը: Մյուս կողմից՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկության ցածր մակարդակը իրենց իրավունքների և իրավահենք մոտեցումների մասին թույլ չի տալիս պաշտպանելու սեփական իրավունքները:

Հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները

Հասարակության բոլոր անդամներն ունեն մարդու նույն իրավունքները՝ քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական:

Այս իրավունքները ներառում են՝

- օրենքի առաջ առանց խտրականության բոլորի հավասարությունը,
- կյանքի, ազատության և պաշտպանվածության իրավունքը,
- իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը,
- խոշտանգումներից ազատումը,
- շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը,
- ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի իրավունքը,
- տեղաշարժվելու ազատության և քաղաքացիության իրավունքը,
- համայնքում ապրելու իրավունքը,
- խոսքի ու կարծիքի ազատությունը,
- գաղտնիության նկատմամբ հարգանքը,
- տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը,
- կրթության իրավունքը,
- աշխատանքի իրավունքը,
- առողջության իրավունքը,
- կենսապահովման բավարար մակարդակի իրավունքը,
- քաղաքական ու հասարակական կյանքին մասնակցության իրավունքը,

- մշակութային կյանքին մասնակցության իրավունքը և այլն:

Հաշմանդամություն ունեցող բոլոր մարդիկ ունեն առանց որևէ խտրականության, մյուսների հետ հավասար հիմունքներով պաշտպանված լինելու իրավունք: Սա ներառում է հաշմանդամության հիմքով խտրականության բացառում, ինչպես նաև ցանկացած այլ հիմունքներով՝ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային վիճակից, ծնունդից կամ այլ հանգամանքներից:

Հաշմանդամության սահմանումը

Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հաշմանդամությունը համարվել և համարվում է անձի խնդիրը, որը նշանակում է, որ հաշմանդամությունը «անկարողություն» է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է:

Ըստ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ հաշմանդամություն ունեցող անձն այն անձն է, որը, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն (1993 թ.):

Սակայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան 2006 թվականից մասնակից պետություններին առաջարկում է մեկ այլ մոտեցում, որը խնդիրը տեսնում է ոչ թե մարդու, այլ նրա առողջական վիճակի և շրջակա միջավայրի փոխազդեցության մեջ:

Կոնվենցիան միանշանակորեն չի տալիս «հաշմանդամություն» բառի սահմանումը: «Հաշմանդամությունը» զարգացող հասկացություն է, քանի որ հասարակությունն ու հասարակական կարծիքը հաճախ են փոփոխություններ կրում:

Սակայն նշում է.

> ***«Հաշմանդամությունը առողջական խնդիրներ ունեցող անձանց ու շրջակա միջավայրի արգելքների փոխազդեցության հետևանք է, որը խոչընդոտում է նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը»:***

Այսինքն՝ այն, որ մարդը տեսողության խնդիր ունի, դեռևս չի նշանակում, որ հաշմանդամություն ունի: Բայց երբ նրա տեսողության ֆունցիայի խանգարումը և անմատչելի միջավայրը բերում են անձի մեկուսացման կամ նվազեցնում են նրա մասնակցությունը հասարակական կյանքին, արդեն գործ ունենք հաշմանդամության հետ:

Միջավայրային արգելքներից է նաև հաշմանդամության նկատմամբ մարդկանց բացասական վերաբերմունքը, որը սահմանափակում է անձի ֆունկցիոնալությունը և խանգա-

րում հասարակական կյանքին անձի սոցիալական ներառմանը և լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը:

Օրինակ՝ երբ հոգեկան առողջության խնդիր ունեցող մարդու դեպքում միայն այն հանգամանքը, որ նա ունի այս կամ այն հոգեկան առողջության խանգարումը, դեռևս չի փաստում նրա հաշմանդամության մասին: Սակայն այն պահից, երբ այդ հանգամանքը կբախվի հասարակության կարծրատիպային վերաբերմունքին կամ խտրականությանը, ի հայտ կգա հաշմանդամությունը:

Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները

Բժշկական մոդելը

Բժշկական մոդելը կենտրոնանում է միայն մարդու առողջական խնդիրների վրա և հաշմանդամություն ունեցող մարդուն դիտարկում է առաջին հերթին որպես հիվանդի, այդ պատճառով նրա վիճակի բարելավմանն ուղղված գործողությունները կրում են հիմնականում բժշկական և բարեգործական բնույթ (ֆիզիկական վերականգնում, բուժում, բարեգործական օգնություն): Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դառնում է «հիվանդ», «խնամյալ»: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները (խնամողը, ընտանիքը, հասարակությունը): Հասարակությունը

սահմանափակում է նրա կրթության, մասնագիտության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա հիվանդ է և ունի հիմնականում բուժման, խնամքի և հոգածության կարիք: Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մնում ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում է նրա լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին: Այսպիսով, բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը, հատուկ խնամքին և աջակցությանը:

Սոցիալական մոդելը

Հաշմանդամության սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ–մշակութային արժեքների հետևանք: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին և ներուժին: Ավելին, այս մոդելը կոչ է անում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությանը երկրի զարգացման գործընթացներին:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է առաջնային և կարևոր մասնակցություն ունենան իրենց խնդիրների լուծմանն ուղղված օրենքների, քաղաքականությունների, ռազմավարությունների մշակմանը, իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը:

Սոցիալական մոտեցման դեպքում հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակը բարելավելու գործողություններն ուղղված են այն բանին, որպեսզի վերացվեն բոլոր ներքին ու արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության կյանքին նրանց ներգրավմանը: Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք:

Այսպիսով, սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային և վերաբերմունքի, արգելքների/խոչընդոտների փոխազդեցության հետևանք: Հետևաբար, հաշմանդամության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքականությունը պետք է կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման վրա:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և Կամընտիր արձանագրությունը

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան միջազգային պայմանագիր է, որը ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները,

ինչպես նաև մասնակից պետությունների՝ այդ իրավունքներին աջակցելու, պաշտպանելու և ապահովելու պարտավորությունները:

Կոնվենցիան նաև սահմանում է իրագործման երկու մեխանիզմները՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցով կոմիտեն՝ սահմանված մոնիթորինգների իրականացմամբ, և Մասնակից պետությունների համաժողովը՝ կոնվենցիայի կիրարկմանն առնչվող բոլոր հարցերը քննարկելու միջոցով:

ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեան կոնվենցիան ընդունել է 2006 թ. դեկտեմբերի 13–ին, և այն բաց է ստորագրման համար 2007 թ. մարտի 30–ից: Այն պետությունները, որոնք վավերացրել են կոնվենցիան, պարտավորվում են հարգել կոնվենցիայի չափանիշները: Իսկ մյուս պետությունների համար կոնվենցիան համարվում է միջազգային չափանիշ, որին նրանք պետք է ձգտեն հասնել: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 2010 թվականին:

Կամընտիր արձանագրությունը ևս միջազգային պայմանագիր է: Այն սահմանում է երկու ընթացակարգ, որոնք ուղղված են ամրապնդելու կոնվենցիայի իրականացումը և վերահսկումը:

Առաջինը անհատական հաղորդման ընթացակարգն է, Կամընտիր արձանագրության մասնակից պետություններում թույլ է տալիս անհատներին և անհատների խմբերին բողոքներ ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին, այն մասին, որ

պետությունը խախտել է կոնվենցիայով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկը:

Երկրորդը հետաքննության ընթացակարգն է, որը կոմիտեին թույլ է տալիս ձեռնարկել միջոցներ կոնվենցիայի դրույթների կոպիտ կամ պարբերաբար խախտումների դեպքերում:

Կոնվենցիայի անհրաժեշտությունը

Կոնվենցիան անհրաժեշտ է, որպեսզի հստակ վերահաստատվի այն փաստը, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները մարդու իրավունքներն են, և որպեսզի ամրապնդվի այդ իրավունքների նկատմամբ հարգանքը: Չնայած մարդու իրավունքների կոնվենցիաներն առաջարկում են զգալի պոտենցիալ՝ խթանելու և պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ այդ պոտենցիալը լսելի չէր: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները շարունակում էին մերժվել, և նրանք շարունակում էին աշխարհի բոլոր մասերում հասարակությունից դուրս մնալ: Այս շարունակական խտրականությունն ընդգծեց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին իրավաբանորեն պարտավորեցնող գործիք ստեղծելու անհրաժեշտությունը:

Այն 21–րդ դարում ստեղծված մարդու իրավունքների առաջին կոնվենցիան է և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների համապարփակ պաշտպանության առաջին իրավաբանորեն պարտավորեցնող գործիքը: Մինչև կոնվենցիան չհաստատեց դրանք, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները խթանելը, պաշտպանելը և

ապահովելը պարտադիր չդարձան: Այսպիսով, սույն կոնվենցիան ոչ միայն պարզաբանում է, որ պետությունները պետք է բացառեն հաշմանդամության հիմքով խտրականությունը, այլ նաև սահմանում է քայլեր, որով պետությունները պետք է ստեղծեն այնպիսի միջավայր, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են վայելել իրական հավասարությունը: Օրինակ՝ կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ու համակարգերի մատչելիությունը:

Պետությունները պարտավորություններ ունեն՝ կապված իրազեկվածության բարձրացման, արդարադատության մատչելիության, անհատական շարժունակության ապահովման և տվյալների հավաքագրման հետ:

Կոնվենցիան ներառում է սոցիալական զարգացման հեռանկար: Այն ճանաչում է միջազգային համագործակցության կարևորությունը ազգային մակարդակում դրա նպատակների ու խնդիրների իրականացման համար: Այս առումով նորամուծություն է համարվում կոնկրետ գործողությունների հղումները, որոնք նպաստում են միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը՝

ա) ապահովել, որ միջազգային համագործակցությունը՝ ներառյալ միջազգային զարգացման ծրագրերը, լինեն ներառական և մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար,

բ) նպաստել և աջակցել կարողությունների զարգացմանը,

գ) նպաստել համագործակցությանը հետազոտությունների և գիտատեխնիկական գիտելիքների մատչելիության ուղղությամբ,

դ) անհրաժեշտության դեպքում տրամադրել տեխնիկական ու տնտեսական աջակցություն:

ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանն ստորագրում է ՄԱԿ–ի նոր կոնվենցիան Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին, Նյու Յորք, մարտի 30, 2007:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագիծը

2010 թվականին վավերացնելով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ–ի կոնվենցիան՝ Հայաստանի կառավարությունը ստանձնել է օրենսդրական դաշտի համապատասխանեցումը կոնվենցիային և հաշմանդամության մարդու իրավունքների վրա հիմնված մոդելին:

Այս նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2013–ից մինչ օրս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի մի քանի նախագիծ է մշակել և վերանայել, որը սակայն դեռ ուժի մեջ չի մտել:

Նոր նախագծի նպատակն է ապահովել բարենպաստ պայմաններ, որպեսզի ՀՀ–ում հաշմանդամություն ունեցող անձինք այլ անձանց հետ համահավասար հիմունքներով իրականացնեն իրենց բոլոր իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով:

Կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման, կասեցման, վերահաշվարկման, վճարումը դադարեցնելու

և վերսկսելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Այդ կարգավորումները տեղ չեն գտել այս նախագծում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կազմակերպությունների ջանքերով նախագծից հանվել է հաշմանդամության կանխարգելման դրույթը, քանի որ դա ոչ թե հաշմանդամություն ունեցող անձի, այլ առողջական խնդիրների առաջնային կանխարգելման ոլորտ է, որը վերաբերում է բոլորին, բայց կոնվենցիայի դրույթների իրագործում չէ և չի առնչվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին:

Բացի այդ, օրենքի նախագծում հոդվածը կնպաստեր այն կարծրատիպային ու վտանգավոր մշակույթի վերարտադրմանը, որը փորձում է ամեն գնով փոխել մարդուն՝ դարձնելով «նորմալ»:

Նոր սահմանումներ

Նախագիծը նաև նոր սահմանումներ է առաջարկում. օրինակ՝ ***հաշմանդամությունը*** սահմանվում է հետևյալ կերպ՝ անձի առողջական վիճակով պայմանավորված ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական տևական խնդիրների ու միջավայրային արգելքների փոխազդեցության արդյունքում առաջացող իրավիճակ (երևույթ), որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել անձի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը:

Խելամիտ հարմարեցումներ՝ անհրաժեշտ փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառմանը:

Խտրականություն՝ հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում (այդ թվում նաև՝ խելամիտ հարմարեցումների տրամադրման մերժումը), որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով օրենքով սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը:

Հաղորդակցություն՝ տեղեկատվության փոխանցման, ընդունման և փոխանակման գործընթաց, որն իրականացվում է տարբեր եղանակներով և տարատեսակ միջոցների օգտագործմամբ (այդ թվում՝ Բրայլյան համակարգը, շոշափման միջոցով հաղորդակցությունը, մեծ տառատեսակով տպագրությունը, մատչելի մուլտիմեդիան, ինչպես նաև գրավոր, աուդիո և/կամ հաղորդակցական այլ տեխնոլոգիաների այլընտրանքային ձևերը):

Օրենքի նախագիծն ամրագրում է ավելի քան 20 սահմանում, ինչպիսիք են՝ աջակցող տեխնոլոգիաները, սոցիալական ներառումը, հատուկ կարիքը, միջավայրային արգելքները և այլն:

Իրականացումը և մոնիթորինգը

Ըստ նախագծի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը և սոցիալական ներառումը իրականացվում է համալիր և տարեկան ծրագրերին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից:

Համալիր ծրագիրը պետք է ունենա չափելի արդյունքներ և հստակ ժամանակացույց: Այն պետք է ցույց տա, թե, օրինակ, քաղաքաշինության, մշակույթի, կրթության և մյուս ոլորտների լիազոր մարմիններն ինչ գործողություններ են պլանավորում իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց ներառումն ապահովելու համար: Ծրագրի մշակման ընթացքում կառավարության անդամները պետք է խորհրդակցեն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների և անհատների հետ, ստեղծելով անհրաժեշտ պայմաններ նրանց մասնակցության համար:

Բացի այդ, ՀՀ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններն իրենց ոլորտների զարգացման ծրագրերում հաշվի են առնում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները՝ այդ ծրագրերում ներառելով համապատասխան միջոցառումներ:

Բառեր
և եզրույթներ

Բառերն ու արտահայտությունները կարող են ոչ միայն վիրավորել կամ սփոփել մարդկանց, այլ նաև վերաբերմունք ձևավորել և կարծրատիպեր ստեղծել: Հաճախ հաշմանդամություն ունեցող անձանց մասին խոսելիս շատերը բժշկական բառեզրեր են օգտագործում՝ վերցնելով դրանք մարդու հիվանդության պատմությունից, որոնք սակայն ոչինչ չեն ասում նրա դժվարության կամ խնդրի մասին, այլ միայն ավելորդ կարծրատիպ են ստեղծում անձի նկատմամբ՝ ներկայացնելով որպես հիվանդ ու անկարող մարդու:

Նման բացասական օրինակներ են՝ տառապում է մանկական ուղեղային կաթվածով, բնածին արատ ունի, մտավոր թերզարգացած է, հոգեկան է և այլն:

Անհրաժեշտ է ընտրել այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք հնարավորինս քիչ էմոցիաներ կամ խղճահարություն են առաջացնում կամ կարծրատիպեր ստեղծում:

Ոչ նախընտրելի տարբերակներ

- թերարժեք կամ անկարող
- սահմանափակ հնարավորություններով
- աուտիկ
- հոգեկան, շիզոֆրենիկ
- դաուն
- սայլակին գամված կամ սայլակավոր

- թերզարգացած
- խուլուհամր

Նախընտրելի տարբերակներ

- Հաշմանդամություն ունեցող անձ
- աուտիզմ ունի
- Դաունի համախտանիշ ունի
- սովորելու դժվարություններ ունի
- սայլակ է օգտագործում
- նա չի լսում կամ խուլ է
- տեսողության խնդիր ունի

«Հաշմանդամություն ունեցող անձի» հակառակ իմաստը «նորմալ», «առողջ» կամ «լիարժեք» բառերը չեն, այլ՝ «հաշմանդամություն չունեցող անձը»:

Երբեմն «հաշմանդամությունը» օգտագործվում է բացասական իմաստով՝ որևէ մեկին վիրավորելու կամ նրա կարողությունները նսեմացնելու նպատակով: Հենց այս պատճառով հաշմանդամություն ունեցող շատ մարդիկ հրաժարվում են իրենց մասին խոսելիս նշել իրենց հաշմանդամությունը կամ իրենց անվանել հաշմանդամություն ունեցող անձ, մտածելով, որ այդպիսով հրաժարվում են նաև կարգավիճակից և դրա հետ կապված դժվարություններից և կոմպլեքսներից:

Ամեն դեպքում որոշումը մարդունն է. նա է որոշում, թե իրեն ինչպես անվանեն կամ ինչ բառեր օգտագործեն իր մասին խոսելիս:

Հաշմանդամությունը կարելի է ընկալել որպես բազմազանության տեսակ և ընդունել որպես ինքնության մաս: Երբ ասում են՝ տե՛ս ինձ, ոչ թե իմ հաշմանդամությունը, կարելի է ենթադրել, որ հաշմանդամությունը թերություն է կամ բացասական մի բան, որը պետք է անտեսել: Եթե մենք ընդունում ենք, որ հաշմանդամությունը արատ կամ թերություն չէ և որևէ կերպ չի նսեմացնում մարդու արժանիքները, ապա ոչ թե պետք է անտեսենք մարդու հաշմանդամությունը, այլ ընդունենք նրան՝ իր բոլոր առանձնահատկություններով:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շարժումը ԱՄՆ–ում և Մեծ Բրիտանիայում

Ինչպես ԱՄՆ–ն դարձավ երազանքի երկիր

Հուլիսի 26–ին ԱՄՆ–ում նշում են հաշմանդամություն ունեցող հազարավոր անձանց երկար ու համառ պայքարի հաղթական օրը, երբ ուժի մեջ մտավ Americans with Disabilities Act–ը (Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների ակտ):

Americans with Disabilities Act–ը քաղաքացիական իրավունքների մասին օրենք է, որն արգելում է հաշմանդամության պատճառով որևէ խտրականություն: Օրենքն ընդունվել է 1990 թ. հուլիսի 26–ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից, սակայն դրա ընդունումը պահանջել է հազարավոր մարդկանց երկարատև ու համառ պայքար:

ADA–ի պատմությունն ամենևին էլ չի սկսվել այն ստորագրելու օրվանից: Այն իրականում սկսվել է շատ ավելի վաղ ԱՄՆ–ի քաղաքներում և գյուղաքաղաքներում, այն ժամանակ, երբ հաշմանդամություն ունեցող անձինք սկսեցին բախվել այնպիսի խոչընդոտների, որոնք մեկուսացնում էին նրանց իրենց համայնքներից, այն ժամանակ, երբ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները սկսեցին պայքարել իրենց երեխաների նկատմամբ դրսևորվող խտրականության դեմ: Պայքարը սկսվեց տեղական խմբերի ստեղծմամբ, որոնց նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությունն էր: Պայքարը սկսվեց անկախ շարժումներով, որոնք դեմ էին հաշմանդամություն ունեցող անձանց ինստիտուցիոնալացմանը և կոչ էին անում, որ նրանք ապրեն համայնքում:

Americans with Disabilities Act–ն իր ստեղծման համար պարտական է ոչ թե մեկ կամ մի քանի մարդու, այլ այն հազարավոր մարդկանց, որոնք ստեղծեցին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումը, մարդկանց, ովքեր աշխատեցին տարիներ շարունակ՝ կազմակերպելով բողոքի ակցիաներ, ուղերձներ և կոչեր հղելով, օրենսդրական առաջարկներ կազմելով, խոսելով, քարոզելով, բանակցելով, ճնշում գործադրելով, անգամ ձերբակալվելով, անելով հնարավոր ամեն ինչ՝ հանուն այն նպատակի, որի իրականացմանն իրենք հավատում էին:

Օրենսդրության տեսանկյունից հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վարվող քաղաքականության մեջ նկատելի փոփոխություն և առաջխաղացում տեղի ունեցան 1973–ին, երբ Վերականգնողական ակտում ավելացվեց 504–րդ բաժինը, որն արգելում էր հաշմանդամության

հիման վրա որևէ խտրականություն: Առաջին անգամ հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացումը համայնքներից դիտվեց որպես խտրականություն: Մինչդեռ նախկինում ենթադրվում էր, որ բոլոր խնդիրները, որոնց հանդիպում են հաշմանդամություն ունեցող անձինք, օրինակ՝ գործազրկությունը և կրթության պակասը, իրականում նրանց ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումների հետևանք են:

Ամբողջ երկրում հաշմանդամություն ունեցող անձինք սկսեցին նստացույցեր կազմակերպել կառավարական շենքերի դիմաց, ամենաերկար նստացույցը տևել է 28 օր: Շարժման մասնակիցները լսումներ էին կազմակերպում Կոնգրեսի դիմաց, նամակներ գրում, բանակցություններ վարում... Եվ, ի վերջո, համառ պայքարը տվեց իր արդյունքը. 1977 թ. մայիսի 4–ին հրապարակվեց 504–րդ բաժնի կանոնադրությունը, որն էլ կազմեց Americans with Disabilities Act–ի հիմքը:

Հաշմանդամություն ունեցող անձանց շարժումը սկսեց քայլեր ձեռնարկել սատարելու խտրականության դեմ ուղղված պայքարին: Կազմակերպվեց «Խտրականության օրագրեր» ակցիան. հաշմանդամություն ունեցող անձանց խնդրում էին գրել ու նկարագրել այն բոլոր դեպքերը, երբ իրենք հանդիպել են խտրականության կամ ինչ–ինչ խոչընդոտների: Օրագրերը ոչ միայն իբրև վկայություն ծառայեցին, այլև ստիպեցին մարդկանց ավելի զգոն լինել շրջապատում առկա խոչընդոտների նկատմամբ:

1988–ի սեպտեմբերին միասնական լսումներ անցկացվեցին Սենատում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վարվող քաղաքականության, ինչպես նաև կրթության

թեմայով: Լսումներին մասնակցում էին տեսողության, լսողության խնդիրներ ունեցող, Դաունի համախտանիշ, ՄԻԱՎ ունեցող մարդիկ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ և այլք:

Նրանք բոլորն էլ բարձրաձայնում էին թե՛ ճարտարապետական, թե՛ հասարակության մեջ առկա խոչընդոտների մասին, որոնց անձամբ էին բախվում:

Դահլիճում ներկա էր մոտ 700 մասնակից: Լսումներից հետո սենատոր Քենեդին և մի շարք այլ բարձրաստիճան անձինք հայտարարեցին, որ հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքացիական իրավունքների մասին օրենքի նախագիծը այդուհետ կդառնա հաջորդ Կոնգրեսի առաջնային խնդիրը:

Սակայն պատմությունները չէին ավարտվում միայն լսումների դահլիճում: Հաշմանդամություն ունեցող մարդիկ երկրի տարբեր ծայրերից գալիս և անձամբ էին խոսում Կոնգրեսի անդամների հետ, պայքարում օրենքի ընդունման համար և բացատրում, թե որքան կարևոր է օրենքի յուրաքանչյուր կետի ընդունումը: Մարդիկ իրենք էին գալիս, գիշերն անցկացնում էին գետնին, իսկ ցերեկը գնում կոնգրեսականների գրասենյակները: Իսկ նրանք, ովքեր հնարավորություն չունեին Վաշինգտոն հասնելու, նամակներով իրենց պատմություններն էին ուղարկում Կոնգրես, մասնակցում իրենց համայնքներում կազմակերպվող հանդիպումներին և անընդմեջ զանգահարում պատկան մարմիններին:

1989–ի սեպտեմբերի 7–ին 76 կողմ և 8 դեմ ձայների հարաբերակցությամբ ընդունվեց օրենքի առաջին տարբերակը:

Սակայն օրենքի ընդունմանը զուգահեռ հասարակության մի որոշ հատվածի կողմից բողոքի ալիք բարձրացավ: *Reader's Digest* ամսագրի գլխավոր խմբագիրը հայտարարեց, թե Americans with Disabilities Act–ն օգտագործելով, բազմաթիվ «հայցվորներ են դիմում դաշնային դատարաններ՝ անհիմն և անիմաստ հայցեր ներկայացնելով»: Այս բողոքը, որ հայտնվեց լրատվամիջոցներում, որոշ մարդկանց մոտ այն թյուր տպավորությունն ստեղծեց, թե օրենքի պատճառով կստեղծվեն չարդարացված արտոնություններ հաշմանդամություն ունեցող հայցվորների և նրանց փաստաբանների համար: Սակայն գործնականում այս վարկածը չհաստատվեց:

Մեծ ջանքեր գործադրելուց և տարիներ պահանջող պայքարից հետո Americans with Disabilities Act–ն արդյունքում օգնեց փոխել մարդկանց կյանքն Ամերիկայում: Հենց այս օրենսդրական ակտի և դրա իրացման շնորհիվ այսօր ԱՄՆ–ն այն երկրներից է, որտեղ հաշմանդամություն ունեցող մարդիկ լիարժեք ու լիիրավ կյանքով են ապրում: Իհարկե, չի կարելի ասել, որ այլևս ոչ մի խնդիր չկա, սակայն փաստն այն է, որ աշխարհի բազմաթիվ երկրներում ապրող հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ԱՄՆ–ում ստեղծված հավասար հնարավորությունները շարունակում են երազանք մնալ:

Պայքարը, հիրավի, երկար էր, սակայն ոչ ապարդյուն: Սա պայքար էր, որն արժանի է ընդօրինակման:

Վաշինգտոնում ամերիկացի ակտիվիստները մագլցում են ԱՄՆ-ի Կոնգրեսի շենքի (Կապիտոլիումի) աստիճանները:

Հաշմանդամության շարժումը Մեծ Բրիտանիայում

Միացյալ Թագավորության համար շարժման օրինակ էին ԱՄՆ–ը և եվրոպական երկրները: Բրիտանական ճանապարհի առաջնային խնդիրը հաշմանդամության բազմակողմանի սահմանում գտնելն ու սոցիալական մոդելի հաստատումն էր: 1960–ականներին սկիզբ առած շարժմանը նախորդող կարևոր շրջաններն էին եկեղեցական-ինստիտուցիոնալ միջնադարյան շրջանը, որը հայտնի էր բարեգործական, կրոնական և բժշկական կենտրոններով, 18–րդ դարի արդյունաբերական հեղափոխությունը, որի ժամանակ հաշմանդամություն ունեցող անձինք նախ դուրս մնացին աշխատաշուկայից, ապա սկսեցին աշխատել առանձին, հատուկ պայմաններում, և համաշխարհային պատերազմները, որոնց ընթացքում բազմաթիվ զինվորներ հաշմանդամություն ձեռք բերեցին, իսկ վերադարձից հետո միացան նոր–նոր սկիզբ առնող շարժմանը:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ սկսեցին մշակել հաշմանդամության սոցիալ–քաղաքական մոդելի տեսլականը:

1965–ին Լոնդոնի Թրաֆալգարյան հրապարակում տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց առաջին հանրային ցույցը: Այս շրջանում մարդիկ սկսեցին իրենց իրավունքների համար փողոց դուրս գալ:

1970–ականներին սկսեցին ձևավորվել հաշմանդամության սոցիալական մոդելն ու ապաինստիտուցիոնալացման արշավը: 1974–ին «Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք ընդդեմ խտրականության» միավորումը տեղեկատվական քարոզարշավ սկսեց, որն ուղղված էր

հասարակական գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը: Միավորումը հեղինակեց «Հաշմանդամության հիմնարար սկզբունքները» զեկույցը, որում ներկայացրեց այն արժեքները, որոնք այսօր հայտնի են որպես սոցիալական մոդել: Զեկույցի հեղինակները սահմանեցին վնասվածքի և հաշմանդամության տարբերությունը:

1980–ին Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող բրիտանական կազմակերպությունները համընդհանուր դաշինք կազմեցին: Կեցության ներառական կենտրոնները գնալով շատացան Միացյալ Թագավորությունում:

1981–ը հռչակվեց հաշմանդամության միջազգային տարի, քանի որ հենց այս ժամանակ սկսեցին գումարվել հաշմանդամության առաջին միջազգային կոնֆերանսները, որոնց մասնակցում էին աշխարհի տարբեր ծայրերում գործող կառույցներ:

1990–ականներին հիմնական նպատակ դարձավ խտրականության դեմ օրենքի հաստատումը, որն ընդունվեց 1995–ին: Մյուս կողմից՝ այս շրջանում շարժմանը միացան սևերի և ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) անձանց շարժումները:

20–րդ դարի վերջին շրջանում շարժման ակտիվիստները սկսեցին պայքարել մատչելի տրանսպորտի, հանրային ու հասարակական տարածքների, անկախ ապրելու իրավունքի համար: Նրանք նաև ակտիվ պայքարում էին հեռուստամարաթոնների դեմ, որոնք դրամահավաքի տեսքով շարունակում էին բարեգործական մոդելը:

Դեռևս 1351–ին ընդունվեց աշխատունակ մարդկանց դրամական օգնությունն արգելող օրենքը, որը, սակայն, չէր վերաբերում հաշմանդամություն ունեցող անձանց: Հասարակության մտքով չէր էլ անցնում, որ նրանք ևս կարող են աշխատել: Սա առաջին դեպքն էր, երբ հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ խտրականությունը հաստատվում և խրախուսվում էր օրենքով:

1601–ին այս դրույթը թարմացվեց Եղիսաբեթյան օրենքով, որը հաշմանդամությունը սահմանեց անհատի խնդիր, որը պետությունը, եկեղեցին և բարերարները պարտավորվում են հանդուրժել և կառավարել:

Օրենսդրական կարևոր ձեռքբերումներ էին 1995–ի խտրականության դեմ օրենքի ընդունումն ու ՄԱԿ–ի կոնվենցիայի ստորագրումը: Ի դեպ, առաջին օրենքը հաշմանդամությունը սահմանել և դիտարկել է բժշկական տեսանկյունից, ինչը ստիպում է մի շարք ակտիվիստների պնդել, որ օրենքն ամբողջական և արդյունավետ չէ:

Հավասարություն և սոցիալական մոդելի ամբողջական հաստատում այսօր էլ չկա, թեև եկեղեցական ու բժշկական մոդելները զիջել են իրենց դիրքերը: Մուրացկանությամբ զբաղվող հաշմանդամություն ունեցող մարդիկ այժմ գուցե ավելի քիչ են փողոցներում, քան առաջ, և, գուցե, եկեղեցին պակաս դեր է խաղում, սակայն փոխվել է ոչ թե գաղափարը, այլ՝ բնույթը:

Անկարողության ու կողմնակի օգնության անհրաժեշտության գիտակցությունը խորացնող դրամահավաքներն այսօր էլ արդիական են: Այժմ էլ քիչ չեն դեպքերը, երբ

հաշմանդամության հետ չի համակերպվում հենց հաշ-մանդամություն ունեցող անձը, իսկ դրամահավաքները խարխլում են շարժումների կարևոր ձեռքբերումներից մե-կը, համաձայն որի ոչ թե անձն է փոփոխման ենթակա, այլ միջավայրը:

Բրիտանացի ակտիվիստները վստահ են, որ կողմնակի, ավելորդ աջակցությունը հանգեցնում է կախվածության, ինչը հանգեցնում է ընտրությունը, սեփական որոշումներ կայացնելու ազատությունը հաշմանդամություն չունեցող անձանց զիջելուն:

Աստիճանաբար նոր թափ են ստանում կրթական և տեղե-կատվական շարժումները, որոնցից շատերը ղեկավարում են հենց հաշմանդամություն ունեցող անձինք՝ «Ոչինչ մեզ համար առանց մեզ», «Բարձրաձայնելով մեզ համար/Մենք մեզ համար» սկզբունքներով:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ մասնակցում են բողոքի ցույցերին՝ ընդդեմ խտրականության, 1990

Coalition for Inclusive Legal Reforms

Ուղեցույցը մշակվել է «Դիսըբիլիթի ինֆո» ՀԿ-ի կողմից «Խթանել հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենսդրությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի և ԱՄՆ Մոբիլիթի Ինթերնեշնլ ԱՄՆ-ի (MIUSA) կողմից՝ ԱՄՆ միջազգային հարցերի ազգային դեմոկրատական ինստիտուտի աջակցությամբ: